«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր

Փոքր դրամաշնորհների հայտ

Ծրագրի անվանումը	**««ՄԻԱՍԻՆ» ընդդեմ կոռուպցիայի»**
Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ	**Տիգրան Շիրինյան, հեռ. 093 07-68-88, էլ. փոստ tigran.shirinyan@gmail.com**
Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)	**Արարատի մարզ, ք. Արարատ և հարակից համայնքներ**
Ծրագրի տևողությունը	**4 ամիս, 01 հուլիս – 31 հոկտեմբեր**
Ծրագրի հակիրճ նկարագիրը	**Ծրագիրն իրականացվելու է Արարատ քաղաքի և հարակից համայնքների ավագ դպրոցներում և միջին մասնագիտական հաստատություններում սովորողների և ծնողական խորհուրդների շրջանում կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների նրանց իրազեկվածության մակարդակի բարձրացման վերաբերյալ:**
Ծրագրի բյուջեն (նշել դրամով)	**2,076,900 ՀՀ դրամ (ՀԵԻԱ-ից պահանջվող գումար 1,396,900 ՀՀ դրամ)**
Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)	**«Հրեշտակ» մանկապատանեկան հասարակական կազմակերպություն**

Դիմող կազմակերպությունների նկարագրություն.

«ՄԻԱՍԻՆ» հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության հասարակական կազմակերպությունը պետական գրանցում է ստացել 2013թ. Հուլիսի 19-ին:

Կազմակերպության նպատակն է՝ պաշտպանել Արարատի մարզում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց շահերը, նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանը հասարակական կյանքին:

«Հրեշտակ» մանկապատանեկան հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2003թ-ի հունիսի 27-ին: Կազմակերպության առաքելությունն է՝ օգնել զոհված ազատամարտիկների ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, միայնակ մայրերին, ծեր թոշակառուներին և տաղանդավոր երեխաներին: Կրթել և դաստիարակել ազգին և հայրենիքին նվիրված զինվորներ:

1. Ծրագրի նկարագրություն

Ինչպես գիտենք, Հայաստանում ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան ուժի մեջ է մտել 2007 թվականին, սակայն, ինչպես ցույց է տալիս Հակակոռուպցիոն քաղաքականությունը ՀՀ կրթության ոլորտում (2015-2018թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների ծրագրի վերլուծության) վիճակագրությունը, ըստ Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) արդյունքների՝ ՀՀ-ում 2013թ. Կրթական համակարգը 58 տոկոսով տեղ է գտել առավել կոռումպացված ոլորտների շարքում:

Այս վիճակագրությունը ևս մեկ անգամ փաստում է, որ Հայաստանում կոռուպցիան մնում է մեր երկրի ամենաառաջնային և հրատապ լուծում պահանջող խնդիրների շարքում:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ կետի՝ ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Թեև ծնողական խորհուրդ արտահայտությունը ներմուծվել է նաեւ կրթական օրենսդրություն, սակայն դրանից ոչինչ չի փոխվել. դպրոցների մեծամասնությունում ծնողական խորհուրդները թերի են կազմավորված և եթե կան էլ, ապա դրանք գործում են դպրոցի վարչակազմի հայեցողությամբ: Իրականում ծնողական խորհուրդները բավարար չափով չեն մասնակացում դպրոցի կառավարման և դաստիարակչական աշխատանքներին, այլ կատարում են այլ աշխատանքներ համագործակցելով ուսուցիչների հետ:

Չնայած 12-ամյա հանրակրթության համակարգի ներդրմամբ նախատեսվում է էականորեն բարելավել կրթության որակը և հասանելիությունը բնակչության անապահով խմբերի համար, այդուհանդերձ, հանրակրթական դպրոցներում մտահոգիչ է մնում այն խնդիրը, երբ աշակերտի բացակայության պայմաններում՝ վերջինիս արտահայտման ձևերն են արտադասարանական պարապմունքները, երբ նրա գոյությունը փաստաթղթավորվում է: Հանրակրթական դպրոցներում մի շարք Կոռուպցիոն ռիսկեր պայմանավորված են մնում անհարգելի բացակայություններով, ինչպես նաև, ավարտական քննություններում բարձր գնահատականներով:

Կոռուպցիոն դրսևորումներ են նկատվում նաև միջին մասնագիտական հաստատություններում՝ հատկապես ընդունելության և ավարտական քննությունների ժամանակ:

Կոռուպցիայի մասին իրազեկվածության բացակայությունը կամ ցածր մակարդակը, ուսանողության կողմից գիտելիքների չարժևորումը պարարտ հող է հանդիսանում կոռուպցիայի ձևավորման և արմատավորման համար:

Գիտակցելով երիտասարդների անգնահատելի դերը կոռուպցիայի դեմ պայքարում, կարևորելով նրանց մասնակցության ապահովումը. սույն ծրագիրը նպատակ ունի նպաստել միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների և ավագ դպրոցի աշակերտների, նրանց ծնողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և հրավիրել նրանց ուշադրությունը կոռուպցիայի կանխարգելման ու վերացման խնդիրներին:

Սույն ծրագրի նպատակն է՝ բարձրացնել Արարատի մարզի Արարատ քաղաքի և հարակից համայնքների միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների, ավագ դպրոցի աշակերտների նրանց ծնողների իրազեկվածությունը կոռուպցիոն երևույթների մասին: Ձևավորել անհանդուրժողական վերաբերմունք կոռուպցիայի նկատմամբ, խթանել միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների, ավագ դպրոցի աշակերտների ներգրավմանը կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրերում:

Ծրագրի նպատակին հասնելու համար նախատեսում ենք Արարատ քաղաքի և հարակից համայնքների միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների, ավագ դպրոցի աշակերտների, նրանց ծնողների իրազեկվածության աստիճանը բարձրացնելու և կոռոպցիայի դեմ պայքարի ծրագրերում նրանց ակտիվ մասնակցությունը խթանելու նպատակով հակակոռուպցիոն թեմաներով դասընթացների անցկացում: Նախատեսվում է դասընթացներին ներգրավել շուրջ 200 մասնակից:

Ծրագրում նախատեսված է նաև քանակական սոցիոլոգիական հարցում՝ համապատասխան ոլորտի մասնագետի ներգրավմամբ, հակակոռուպցիոն թեմաներով դասընթացներից առաջ և հետո Արարատ քաղաքի և հարակից համայնքների միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների, ավագ դպրոցի աշակերտների, նրանց ծնողների, դասախոսական և ուսուցչական

անձնակազմի, ինչպես նաև պատահական անցորդների շրջանում: Որպես հարցման արդյունք կկազմվի զեկույց խնդրո առարկայի վերաբերյալ, որը կարտացոլի դպրոցներում տիրող ներկա իրավիճակը և կներառի առաջարկվող փոփոխությունների փաթեթ, և որպես բխող արդյունք կտրվի գնահատական դասընթացների արդյունավետության վերաբերյալ:

Ծրագրի ընթացքում կատարվող գործողությունները կվերահսկվեն և կգնահատվեն լուսանկարներով, ստորագրաթերթիկներով: Ամսվա կտրվածքով կկազմվի ֆինանսական և ծրագրային մանրամասն հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

Իրականացված ծրագրի արդյունքում դպրոցներում, միջին մասնագիտական հաստատություններում կունենանք իրազեկ աշակերտներ, ուսանողներ և ծնողներ:

Ծնողները հետևողական կլինեն ծնողական խորհրդի աշխատանքներին և անհրաժեշտության դեպքում հանդես կգան առաջարկություններով:

Ուսանողները կարժևորեն իրենց գիտելիքը և նրանց մեջ բացասական վերաբերմունք կձևավորվի «կոռուպցիոն ճանապարհով գնահատական վաստակելու» երևույթի նկատմամբ:

Նախատեսվում է ծրագրի ընթացքում իրականացվելիք դասընթացների, ինչպես նաև, սոցիոլոգիական հարցման արդյունքների վերաբերյալ գովազդ-տեղեկագիր կտեղադրվի ԱՐՄԱԿԱԴ հարթակում:

Աշակերտները կներգրավվեն կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրերում:

Իրականացված գործողությունների արդյունքում հակակոռուպցիոն ծրագրերում ակտիվ մասնակցություն ունեցող աշակերտական և ուսանողական խմբերը կսկսեն հակակոռուպցիոն գործողություններ իրականացնել և իրենց գաղափարներով կվարակեն նոր ուսանողների և աշակերտների:

2. Գործողությունների ժամանակացույց

Գործողություն	Հուլիս					Օգոստոս					Սեպտեմբեր					Հոկտեմբեր				
Դասընթացավարների հետ համագործակցության հաստատում, ծրագրի քննարկում-համապատասխանեցում																				
Դասընթացների նյութերի մշակում																				
Դասընթացի մասնակիցների համար նախատեսված նյութերի փաթեթների մշակում, տպագրում, կազմում																				
Դասընթացների անցկացում																				
Սոցիոլոգիական հարցման նախապատրաստական աշխատանքներ																				
Սոցիոլոգիական հարցման անցկացում																				
Սոցիոլոգիական հարցման արդյունքների ամփոփում																				
Մարզային ԶԼՄ-ների հետ պայմանավորվածությունների ձեռքբերում																				
Գովազդի տեղադրում ԱՐՄԱԿԱԴ հարթակում																				
Հանդիպում մարզային ԶԼՄ-ների հետ, ծրագրի ամփոփ ներկայացում																				

3. Ծրագրի բյուջե

ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵ							
	Ծախսի տեսակը	Չափման Միավոր	Միավորի քանակը	1 միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ներդրման գումար	ՀԵԻԱ-ից պահանջվող գումար	Ընդամենը (ՀՀ դրամ)
1	Աշխատակազմ (ծրագրի աշխատակազմ աշխատավարձ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերն ու պարտադիր վճարները)						
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	4	30,000	-	120,000	120,000
1.2	Ծրագրի համակարգող	ամիս	4	30,000	-	120,000	120,000
1.3	Հաշվապահ	ամիս	4	30,000	-	120,000	120,000
1.4	Շահերի պաշտպան*3	ամիս	4	75,000	300,000	-	300,000
	Ընդամենը (ՀՀ դրամ)				**300,000**	**360,000**	**660,000**
2	Ճանապարհածախս (միայն տաքսի ծառայության վճար)						
2.1	Համայնքային այցելությունների համար ճանապարհածախս (միջինացված գումար ներառյալ սպասելավարձ)	այց	12	3,000	-	36,000	36,000
2.2	Արտաշատ քաղաք այցելությունների համար ճանապարհածախս (միջինացված գումար ներառյալ սպասելավարձ)	այց	4	4,000	-	16,000	16,000
2.3	Երևան քաղաք այցելությունների համար ճանապարհածախս (միջինացված գումար ներառյալ սպասելավարձ)	այց	2	7,000	-	14,000	14,000
	Ընդամենը(ՀՀ դրամ)				**-**	**66,000**	**66,000**
3	Ուղղակի ծախսեր						
3.1	Գրասենյակի վարձավճար	ամիս	4	50,000	200,000	-	200,000
3.2	Համակարգիչների վարձակալություն (2 հատ)	ամիս	4	30,000	120,000	-	120,000
3.3	Տպիչ սարքի վարձակալություն	ամիս	4	10,000	40,000	-	40,000
3.4	Տպիչ սարքի քարտրիջի լիցքավորում	անգամ	4	4,000	-	16,000	16,000
3.5	Թվային ֆոտոապարատի վարձակալություն	ամիս	2	10,000	20,000	-	20,000
3.6	Կապի միջոցներ (ֆիքսված հեռախոսակապ)	ամիս	4	4,800	-	19,200	19,200
3.7	Կապի միջոցներ (բջջային հեռախոսակապ)	ամիս	4	8,000	-	32,000	32,000
3.8	Կապի միջոցներ (ինտերնետ)	ամիս	4	4,500	-	18,000	18,000
3.9	Գրասենյակային պարագաներ	ամիս	4	10,000	-	40,000	40,000
3.10	Գովազդ Արմակադ հարթակում	հատ	3	34,900	-	104,700	104,700
3.11	Տպագրություն շապիկների վրա	հատ	7	5,000	-	35,000	35,000
	Ընդամենը (ՀՀ դրամ)				**380,000**	**264,900**	**644,900**
4	Դասընթացներ/խորհրդատվություն						
4.1	Գրենական պիտույքներ դասընթաց-խորհրդատվության մասնակիցների համար	անձ	250	300	-	75,000	75,000
4.2	Դասընթացավարի վճար	օր	10	25,000	-	250,000	250,000
4.3	Սուրճի ընդմիջում դասընթաց-խորհրդատվության մասնակիցների համար	անձ	250	450	-	112,500	112,500
4.4	Մասնակիցների համար նախատեսված նյութերի փաթեթ	անձ	250	50	-	12,500	12,500
	Ընդամենը (ՀՀ դրամ)				**-**	**450,000**	**450,000**
5	Սոցիոլոգիական հարցում						
5.1	Սոցիոլոգի վճար	ամիս	2	25,000	-	50,000	50,000
5.2	Գրենական պիտույքներ սոցիոլոգիական հարցման համար	ամիս	2	2,500	-	5,000	5,000
5.3	Սոցիոլոգիական հարցման համար անհրաժեշտ նյութերի տպագրություն	ամիս	2	1,000	-	2,000	2,000
	Ընդամենը (ՀՀ դրամ)				**-**	**57,000**	**57,000**
6	Ծրագրի ամփոփում/քննարկում						
6.1	Տարածքի վարձակալություն	ժամ	2	15,000	-	30,000	30,000
6.2	Պրոյեկտորի և պրոյեկտորի էկրանի վարձակալություն	օր	1	15,000	-	15,000	15,000
6.3	Սուրճի ընդմիջում մասնակիցների համար	անձ	35	800	-	28,000	28,000
6.4	Մասնակիցների համար նախատեսված նյութերի փաթեթ	անձ	35	1,000	-	35,000	35,000
	Ընդամենը (ՀՀ դրամ)				**-**	**108,000**	**108,000**
7	Այլ ծախսեր						
7.1	Կանխիկացում բանկային հաշվից	անգամ	10	500	-	5,000	5,000
7.2	Գրասենյակային այլ պարագաներ	ամիս	4	5,000	-	20,000	20,000
	Ընդամենը (ՀՀ դրամ)				**-**	**25,000**	**25,000**
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ					**680,000**	**1,396,900**	**2,076,900**

4. Այլ տեղեկատվություն

Սույն ծրագիրը այլ կազմակերպությունների չի ներկայացվել:

5. Դրամաշնորհային հայտին կից ներկայացվելիք փաստաթղթերի ցանկ

1. ՔՀԿ-ների կանոնադրության պատճենները.
2. ՔՀԿ-ների պետական գրանցման վկայականի պատճենները՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները.
3. ՀԵԻԱ կողմից կազմակերպված հակակոռուպցիոն ուսուցումների մասնակցության վկայականի պատճենները.
4. Հարկ վճարողների հաշվառման համարի (ՀՎՀՀ) պատճենը.
5. Բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկություն (հաղթող ճանաչված հայտատուները պետք է ներկայացնել նաև քաղվածք բանկից).
6. Ծրագրի հիմնական աշխատակազմի ինքնակենսագրականները,
7. Եթե ծրագրի ղեկավարը ՔՀԿ-ի ղեկավարը չէ, ապա ՔՀԿ ղեկավարի կողմից ծրագրի ղեկավարին տրված լիազորագիրը.
8. Պարտավորագիր-նամակներ՝ համատեղ ներկայացվելիք ծրագրերի դեպքում:

Ծրագրի ղեկավար՝ **Տիգրան Շիրինյան**

29.06.15թ